ՀՀ վերաքննիչ քրեական դատարան

Բողոքաբեր՝

Հեղինե Պետրոսյանի ներկայացուցիչներ

Արթուր Սաքունց և Արայիկ Զալյան

ք. Վանաձոր, Տիգրան Մեծ 59

Պատասխանողներ՝

ՀՀ Հատուկ քննչական ծառայություն

ք. Երևան, Վաղարշ Վաղարշյան 13ա

ՀՀ գլխավոր դատախազություն

ք. Երևան, Վազգեն Սարգսյան փ. 5

ՎԵՐԱՔՆՆԻՉ ԲՈՂՈՔ

(2014թ. սեպտեմբերի 09-ի Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի որոշման դեմ)

2014թ. սեպտեմբերի 09-ին, Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը՝ Մ. Մարտիրոսյանի նախագահությամբ (այսուհետ՝ դատարան), դռնբաց դատական նիստում քննության առնելով Հեղինե Հարությունի Պետրոսյանի ներկայացուցիչներ Արթուր Սաքունցի և Արայիկ Զայլանի 2014թ.-ի հուլիսի 25-ի բողոքը, որով խնդրել են վերացնել թիվ 62202513 քրեական գործով ՀՀ հատուկ քննչական ծառայության հատկապես կարևոր գործերի (այսուհետ՝ նաև ՀԿԳ) քննիչ Մ. Բաբայանի 2013թ. դեկտեմբերի 10-ի՝ քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշումը և գործն ուղարկել նոր քննության պահանջով դիմումը, այն անբողջությամբ մերժեց:

1.Գործի դատավարական նախապատմությունը.

1.1. 2011թ. նոյեմբերի 29-ին Հայկ Մովսիսյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի 2-րդ մասով, քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան, նստավայրը՝ Ստեփանակերտ: 2012թ. նոյեմբերի 20-ի դատավճռով Հայկ Մովսիսյանը նույն հոդվածով մեղավոր է ճանաչվել և դատապարտվել ազատազրկման՝ 3 տարի ժամկետով:

1.2. 2012թ. նոյեմբերի 27-ի լույս 28-ի գիշերը, ԼՂՀ քննչական մեկուսարանի 8-րդ խցում Հայկ Մովսիսյանին գտել են մահացած:

1.3. 2012 թվականի նոյեմբերի 28-ին ԼՂՀ գլխավոր դատախազության հատուկ քննչական բաժնում ԼՂՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 12200712 քրեական գործը՝ ԼՂՀ ոստիկանության քրեակատարողական վարչության մեկուսարանի կալանավոր Հայկ Արտավազդի Մովսիսյանի ինքնասպանության դեպքի առթիվ:

1.4. 2013թ. ապրիլի 11-ին ՀՀ գլխավոր դատախազի կողմից ներկայացվել է վերաքննիչ բողոք ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2012թ. նոյեմբերի 20-ի դատավճռի դեմ:

1.5. 2013թ. ապրիլի 16-ին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը կայացրել է որոշում ՀՀ գլխավոր դատախազի վերաքննիչ բողոքը բավարարելու մասին, ըստ որի Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012թ. նոյեմբերի 20-ի դատավճիռը՝ քրեական գործով ըստ մեղադրանքի Հայկ Մովսիսյանի ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի 2-րդ մասով բեկանել է և Հայկ Մովսիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցանքի կատարման մեջ **ճանաչել անմեղ և արդարացրել՝ հանցակազմի բացակայության հիմքով:**

1.6. Հայկ Մովսիսյանի վերաբերյալ քրեական գործի վարույթն իրականացրած պաշտոնատար անձանց գործողություններին իրավական գնահատական տալու պատճառաբանությամբ 2013 թվականի մարտի 19-ին որոշում է կայացվել քրեական գործը ՀՀ գլխավոր դատախազության միջոցով ՀՀ հատուկ քննչական ծառայություն ուղարկելու մասին:

1.7. ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչի 2013թ. մարտի 28-ի որոշմամբ թիվ 12200712 քրեական գործի նյութերով հարուցվել է նոր՝ թիվ 62202513 քրեական գործը Հայկ Մովսիսյանի վերաբերյալ քրեական գործի վարույթն իրականացնող պաշտոնատար անձանց պաշտոնական անփութության ենթադրյալ դեպքի առթիվ, ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով: Նույն օրը թիվ 12200712 քրեական գործը միացվել է թիվ 62202513 քրեական գործին:

1.8. 2013թ. դեկտեմբերի 10-ի թիվ 62202513 քրեական գործով ՀՀ հատուկ քննչական ծառահության քննիչ Ա. Բաբայանի կողմից կայացվել է քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշում:

1.9. 2014թ. հուլիսի 5-ին դիմումատուներիս կողմից ներկայացվել է դիմում-բողոք ՀՀ գլխավոր դատախազ Գ. Կոստանյանին, պահանջելով վերացնել ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչ Ա. Բաբայանի 2013թ. դեկտեբերի 10-ի քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշումը և գործը նախաքննության ուղարկել:

1.10. 2014թ. հուլիսի 14-ին ՀՀ գլխավոր դատախազ Գ. Կոստանյանից ստացվել է բողոքը մերժելու մասին որոշում:

1.11. 2014թ. հուլիսի 25-ին դիմումատուներիս կողմից դիմում է ներկայացվել ՀՀ Երևանի կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ խնդրելով վերացնել ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչ Ա. Բաբայանի՝ 2013թ. դեկտեբերի 10-ի քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշումը:

1.12. Գործը վարույթ է ընդունվել ՀՀ Երևանի կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավար Մ. Մարտիրոսյանի (այսուհետ՝ նաև դատարան) կողմից և դատական նիստ նշանակվել 2014թ. օգոստոսի 26-ին:

1.13. 2014թ. օգոստոսի 26-ին կայացած դատական նիստի ժամանակ դիմումատու Ա. Զալյանը հանդես է եկել միջնորդությամբ այն մասին, որ դատարանը պարտավորեցնի նախաքննություն իրականացնող մարմնին դատարան ներկայացնել նախաքննության նյութերը, որը դատարանի կողմից բավարարվել է և գործի քննությունը հետաձգվել և նշանակվել է 2014թ. սեպտեմբերի 9-ին:

1.14. 2004թ. սեպտեմբերի 9-ին կայացած դատական նիստին դատարանի կողմից հրապարակվել է այն փաստաթղթերի ցանկը, որոնք նախաքննության մարմնի կողմից ներկայացվել են դատարան[1], չբավականացնելով նախորդ դատական նիստին բավարարված միջնորդության կատարումը դիմումատու Ա. Զալյանի կողմից ներկայացվել է ևս մեկ միջնորդություն այն մասին, որ նախաքննության մարմնի կողմից ներկայացված նյութերը դա քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշման հիմքում ընկած բոլոր նյութերը չեն և միջնորդել է պարտավորեցնել նախաքննությունը իրականացրած մարմնին անբողջությամբ դատարան ներկայացել թիվ 62202513 քրեական գործի նյութերը, որի վերաբերյալ դատարանը կայացրել է որոշում այն մերժելու մասին:

1.15. Դիմումատու Ա. Զալյանի կողմից ներկայացվել է նախագահող դատավոր Մ. Մարտիրոսյանի ինքնաբացարկի միջնորդություն՝ պատճառաբանությամբ, որ Հ. Մովսիսյանի դատական պաշտպանությունը իրական չէ և դատարանը դրսևորում է կողմնակալ վերաբերմունք, միևնույն ժամանակ խախտում է քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ, Մարդու իրավունքների եվրոպական կոնվեցիայի 2-րդ, 6-րդ և 13-րդ հոդվածները: Ներկայացված միջնորդությունը դատարանի կողմից մերժվել է:

1.16. Նախագահող դատավոր Մ. Մարտիրոսյանի կողմից նույն օրը գործի քննությունը շարունակելով, չունենալով քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշման հիմքում ընկած քրեական գործի ամբողջական նյութերը, կայացնում է որոշում ներկայացված դիմումը մերժելու մասին (որը ստացվել է 2014թ. սեպտեմբերի 24-ին):

3. Դատարանի կողմից խախտվել է ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ և 290-րդ հոդվածները.

3.1. ՀՀ սահմանադրական դատարանը իր 2009թ. դեկտեմբերի 7-ի ՍԴՈ-844 որոշման 5-րդ կետում հայտնել է, որ մինչդատական վարույթում հետաքննության և նախաքննության մարմինների, (...) որոշումների և գործողությունների դատական բողոքարկման ինստիտուտը (ՀՀ քր. դատ. օրենսգրքի 278 հոդվածի 2-րդ մաս, 290 հոդված) որպես քրեական վարույթում անձի իրավունքների ու ազատությունների պաշտպանության միջոց՝ կոչված է երաշխավորելու ՀՀ Սահմանադրության ինչպես 18 և 19 հոդվածներում, այնպես էլ 3, 14, 14.1, 16, 17 և անձի իրավունքների ու ազատությունների պաշտպանության սահմանադրաիրավական սկզբունքի գերակայությունն արտացոլող բազմաթիվ այլ հոդվածներում ամրագրված նորմերի կենսագործումը: Այն կոչված է ապահովելու անձի՝ ինչպես սահմանադրական, այնպես էլ օրենքով երաշխավորված այլ իրավունքները, ազատությունները՝ վերոհիշյալ պետական մարմինների ու պաշտոնատար անձանց անօրինական (անիրավաչափ) որոշումներից ու գործողություններից, և իրացվում է արդարադատական առանձնահատուկ գործառույթի՝ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության միջոցով:

---

1. գործի վարույթը կարճելու մասին որոշում, գրություն, ՀՀ Գլխավոր դատախազի որոշումը դիմումատուիս դիմումը մերժելու մասին, դատաբժշկական փորձաքննություն նշանակելու մասին որոշում, դատաբժշկական փորձաքննության թվով 2 եզրակացություն, կրկնակի դատաբժշկական փորձաքննություն նշանակելու մասին որոշում, ՀՀ վճռաբեկ դատարանի որոշում:

Վկայակոչված որոշմամբ դատարանը հայտնել է, որ «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի, վերջինիս՝ «Դատական վերահսկողությունը մինչդատական վարույթի նկատմամբ» վերտառությունը կրող 39-րդ գլխի նորմերի համալիր վերլուծությունը վկայում է, որ հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների օրինականության վերաբերյալ բողոքների քննությունը, որպես մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործառույթ, ունի իր առանձնահատուկ խնդիրներն ու նպատակները, մասնավորապես՝ բողոքարկվող որոշումների և գործողությունների օրինականությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի և օրենսդրության այլ ակտերի պահանջներին համապատասխանությունը) ստուգելու արդյունքում պարզել անձի (կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության այլ մասնակցի կամ այլ անձի) իրավունքների և ազատությունների խախտման փաստը և կայացնել համապատասխան որոշում՝ անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության, կամ բողոքը մերժելու վերաբերյալ:

3.2. ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք»:

Սահմանադրությամբ ամրագրված մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության արդյունավետ միջոցների շարքում առաջնային տեղ է գրավում դատական պաշտպանության իրավունքը, իսկ քրեական գործի մինչդատական վարույթի ընթացքում դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման երաշխիքներից է դատական վերահսկողությունը մինչդատական վարույթի նկատմամբ:

Ըստ ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԱՐԴ 1/0003/11/08 վճռի՝ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության խնդիրներն են՝

- դատավարության մասնակիցների և այլ անձանց իրավունքների և ազատությունների, օրինական շահերի պահպանության ապահովումը,
- դատավարության մասնակիցների և այլ անձանց խախտված իրավունքների և ազատությունների վերականգնումը մինչդատական վարույթում:

Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը դատավարական օրենքով նախատեսված միջոցների համակարգ է, որն ուղղված է դատական իշխանության սահմանադրական գործառույթների իրականացմանը գործի մինչդատական վարույթում՝ նպատակ ունենալով թույլ չտալ անձի իրավունքների և ազատությունների անօրեն և չհիմնավորված սահմանափակումներ, ինչպես նաև վերականգնել խախտված իրավունքներն ու ազատությունները:

Քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումների բողոքարկման դեպքերն ու դրանց դատավարական ընթացակարգը սահմանված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ և 290-րդ հոդվածներով:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի համաձայն՝

«1. Հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից: (...)

4. (...) Վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է դատարան ներկայացնել բողոքի վերաբերյալ նյութեր: Վարույթն իրականացնող մարմինը և դիմողը բացատրություններ տալու իրավունք ունեն»:

Նույն հոդվածի 5-րդ մասի իմաստով՝ դատարանը պարտավոր է բողոքի քննության արդյունքներով կայացնել կամ ներկայացված բողոքը մերժելու որոշում, եթե գտնի, որ անձի իրավունքները կամ ազատությունները խախտված չեն, կամ կայացնի որոշում՝ անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին, եթե հիմնավորված կհամարի, որ տեղի է ունեցել անձի իրավունքների կամ ազատությունների խախտում:

Այսպիսով, նախաքննության մարմնի՝ քրեական գործի վարույթը կարճելու վերաբերյալ որոշումները մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության օբյեկտ են, այդ որոշումների օրինականությունն ու հիմնավորվածությունը՝ դատական վերահսկողության առարկա:

3.3.Սույն գործով դիմումատուներս քրեադատավարական օրենքով սահմանված կարգով և ժամկետներում բողոքարկել են քննիչի՝ քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշումը նախ վերադաս դատախազին, ապա, ստանալով բողոքը մերժելու վերաբերյալ դատախազի որոշումը, դատարան: ՀՀ Երևանի կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավար Մ. Մարտիրոսյանի կողմից հրավիրված 2014թ. օգոստոսի 26-ին կայացած դատական նիստին դիմումատու Ա. Զալյանը՝ հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 4-րդ մասով նախաքննության մարմնի վրա դրված պարտավորությունը (նյութերը դատարան ներկայացնելու մասին) հանդես է եկել միջնորդությամբ այն մասին, որ դատարանը պարտավորեցնի նախաքննություն իրականացնող մարմնին դատարան ներկայացնել նախաքննության նյութերը, որը դատարանի կողմից բավարարվել է և գործի քննությունը հետաձգվել և նշանակվել է 2014թ. սեպտեմբերի 9-ին:

2004թ. սեպտեմբերի 9-ին կայացած դատական նիստին դատարանի կողմից հրապարակվել է այն փաստաթղթերի ցանկը, որոնք նախաքննության մարմնի կողմից ներկայացվել են դատարան (գործի վարույթը կարճելու մասին որոշում, գրություն, ՀՀ Գլխավոր դատախազի որոշումը՝ դիմումատուիս դիմումը մերժելու մասին, դատաբժշկական փորձաքննություն նշանակելու մասին որոշում, դատաբժշկական փորձաքննության թվով 2 եզրակացություն, կրկնակի դատաբժշկական փորձաքննություն նշանակելու մասին որոշում, ՀՀ վճռաբեկ դատարանի որոշում), չբավականացնելով նախորդ դատական նիստին բավարարված միջնորդութան կատարումը՝ դիմումատու Ա. Զալյանի կողմից ներկայացվել է ևս մեկ միջնորդրություն այն մասին, որ նախաքննության մարմնի կողմից ներկայացված

նյութերը դա քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշման հիմքում ընկած բոլոր նյութերը չեն, և միջնորդել է պարտավորեցնել նախաքննությունը իրականացրած մարմնին անբողջությամբ դատարան ներկայացել թիվ 62202513 քրեական գործի նյութերը, որի վերաբերյալ դատարանը կայացրել է այն մերժելու մասին որոշում:

Նախագահող դատավոր Մ. Մարտիրոսյանի կողմից նույն օրը գործի քննությունը շարունակելով, չունենալով քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշման հիմքում ընկած քրեական գործի ամբողջական նյութերը կայացրել է որոշում ներկայացված դիմումը մերժելու մասին (տե՛ս սույն դիմումի1.13-1.16. կետերը):

Գործի արդարացի քննության սկզբունքն ամրագրող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ « (...) քրեական դատավարության ընթացքում օրինականության խախտումների վերաբերյալ բողոքները պետք է մանրակրկիտ ստուգի քրեական վարույթն իրականացնող մարմինը»:

Նշված դրույթը դատարանին պարտավորեցնում է հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ յուրաքանչյուր բողոք ենթարկել մանրակրկիտ ստուգման, իսկ որպեսզի դատարանն իրականացնի իր լիազորությունը՝ օրենսդիրը սահմանել է վարույթն իրականացնող մարմնի պարտավորությունը՝ դատարան ներկայացնել բողոքի վերաբերյալ նյութեր (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 4-րդ մաս):

Ներկայացված նյութերի հիման վրա դատարանը պետք է ստուգի բողոքարկված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավորված լինելը՝ կապված դատավարության մասնակիցների իրավունքների և ազատությունների հնարավոր խախտումների հետ, որի արդյունքում, հիմնվելով հետազոտված նյութերի վրա, բողոք բերած անձանց փաստարկների մանրակրկիտ ստուգմամբ պետք է կայացնի հիմնավորված և պատճառաբանված որոշում՝ խախտումների առկայության կամ բացակայության մասին, առանց կանխորոշելու այնպիսի հարցեր, որոնք պետք է քննարկման առարկա դառնան քրեական գործի ըստ էության քննության ժամանակ:

Սույն գործով բողոք բերած անձի իրավունքների և ազատությունների խախտման առկայության կամ բացակայության մասին հետևության հանգելու համար դատարանը պետք է հետազոտեր բողոքին վերաբերող բոլոր նյութերը, մինչդեռ, ինչպես երևում է նյութերի ուսումնասիրությունից, դատարանը քրեական վարույթն իրականացնող մարմնից անհրաժեշտ նյութեր չի պահանջել, այլ բավարարվել է սակավաթիվ նյութերով, որոնց ուսումնասիրությամբ չեր կարող պարզել տուժողի իրավունքների խախտված լինելու կամ չլինելու հանգամանքը:

Մասնավորապես, դատարան ներկայացված 16.06.2014թ. դիմումի 3-րդ գլուխը[2] նվիրված էր այն հարցերին, որոնց, ըստ դիմումատուիս, նախաքննության մարմինը չէր տվել համապատասխան պատասխաներ և չէր կատարել համապատասխան քննություն, որոնց վերաբերյալ դատարան ներկայացված դատաբժշկական փորձաքննություն նշանակելու մասին որոշումները և եզրակացությունները չէին կարող տալ պատասխաններ:

---

2. Տես սույն դիմումի կից 4.1-ին փաստաթղթի 13-17 էջերը, 3.2.1-3.2.14-րդ կետերը:

Արդյունքում դատարանը, խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջը, տուժողի իրավահաջորդի ներկայացուցչի փաստարկների շուրջ անհիմն կերպով քննություն չի կատարել, համապատասխան նյութեր չի պահանջել, չի հետազոտել և բողոքարկված որոշմամբ տուժողի իրավահաջորդի իրավունքների և ազատությունների խախտված լինելու կամ չլինելու վերաբերյալ որևէ եզրահանգում չի կատարել, ինչը մեր գնահատմամբ հանգեցրել է գործի արդարացի քննության սկզբունքի խախտմանը (նման իրավական դիրքորոշում է արտահայտել նաև ՀՀ վճռաբեկ դատարանը նույնական փաստական հանգամանքներ ունեցող ԱՐԴ 1/0003/11/08 կայացված վճռի 15-16-րդ կետերում):

4. Սույն գործի շրջանակներում պետության անունից հանդես եկող դատարանը խախտել է տուժողի և վերջինիս իրավահաջորդի ՄԻԵԿ 2-րդ, 6-րդ, 3-րդ, 8-րդ, 13-րդ հոդվածները, ՀՀ Սահմանադրության 18-րդ, 19-րդ, 6-րդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ, 27-րդ հոդվածները.

4.1. 2011թ. օգոստոսի 3-ին ՀՀ ՊՆ 3-րդ կայազորային քննչական բաժնի քննիչ Ա. Ադամյանի կողմից Հայկ Մովսիսյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քր. օր. 363 հոդվածի 1-ին մասով (զինծառայողի կողմից իր առողջությանը վնաս պատճառելը (անդամախեղելը), որը հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել զինվորական ծառայության կամ դրա առանձին պարտականությունների կատարումը ժամանակավորապես դադարեցնելուն):

2011թ. նոյեմբերի 29-ին նախաքննական մարմինը որոշում է կայացրել Հ. Մովսիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի 2-րդ մասով որպես մեղադրյալ ներգրավելու մասին:

2012թ. նոյեմբերի 20-ին Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (նստավայրը՝ Ստեփանակերտ) դատավճռով Հայկ Մովսիսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քր. օր. 363-րդ 2-րդ մասով նախատեսված արարք կատարելու համար և դատապարտվել է ազատազրկման 3 տարի ժամկետով:

Հայկ Մովսիսյանը դատապարտվել և ձերբակալվել է ՀՀ իրավապահ և ՀՀ դատական իշխանությունների կողմից, իսկ այն հանգամանքը, որ ՀՀ դատարանի կողմից ազատազրկման դատապարտված ՀՀ քաղաքացին, պահվել է ԼՂՀ քննչական մեկուսարանի 8-րդ խցում (Շուշի ՔԿՀ-ում) եղել է ՀՀ պատասխանատվության տակ, քանի որ Հայկ Մովսիսյանը դատապարտվել է ՀՀ իշխանությունների կողմից:

Նախաքննության մարմինը ընդունում է, որ Հայկ Մովսիսյանը մահացել է 2012թ. նոյեմբերի 27-ի լույս 28-ի գիշերը, ԼՂՀ քննչական մեկուսարանի 8-րդ խցում:

ԼՂՀ քննչական մեկուսարանը միանշանակ պատկանում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը:

ՀՀ իշխանությունները Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (նստավայրը՝ Ստեփանակերտ) դատավճռով դատապարտված Հայկ Մովսիսյանի պահպանությունը հանձնել են ԼՂՀ քննչական մեկուսարանին (Շուշի ՔԿՀ):

Ոչ նախաքննության և ոչ էլ դատաքննության արդյունքնում կայացված որոշումները չեն պարունակում այնպիսի տեղեկություն, թե պետությունների միջև ինչ պարտավորություններ են առկա ՀՀ քաղաքացիներին ՀՀ դատարանների կողմից դատապարտված ԼՂՀ ՔԿՀ-ներում

պահելու վերաբերյալ, սակայն կարող ենք արձանագրել այն հանգամանքը, որ եթե առողջ անձը ՀՀ ոստիկանության կողմից արգելանքի է վերցվել և հետագայում մահացել, ապա պետությունը (Հայաստանի Հանրապետությունը) պարտավոր է ներկայացնել անձի մահվան հանգեցրած իրադարձությունների համոզիչ բացատրություն և այն չներկայացնելու դեպքում պետությունը խախտած կլինի Կոնվենցիայի 2-րդ հոդվածը:

4.2.Կոնվեցիայի 2-րդ հոդվածը Պետության վրա պարտավորություն է դնում պաշտպանել կյանքի իրավունքը՝ ապահովելով քրեական իրավունքի արդյունավետ դրույթների առկայությունը, կանխելու համար կյանքի դեմ ուղղված հանցագործությունները: Այն նաև պահանջում է, որպեսզի իրականացվի արդյունավետ պաշտոնական քննություն, երբ տեղի է ունեցել սպանություն: Նման քննության իրականացնելու պարտականությունն առաջ է գալիս սպանության և այլ կասկածելի մահվան դեպքերի հետևանքով, երբ հանցագործներն անհատներ են կամ պետական մարմիններ կամ անհայտ են[3]:

Քննությունը պետք է լինի արդյունավետ այն իմաստով, որ այն կարողանա հանգեցնել որոշակի փաստերի հաստատմանը և պատասխանատուների բացահայտմանն ու պատժին: Իշխանությունները պետք է ձեռնարկեն իրենց հասու պատշաճ քայլեր՝ դեպքին առնչվող բոլոր ապացույցները ձեռք բերելու համար: Ավելին, Կոնվեցիայի 2-րդ հոդվածի պահանջները գերակայում են պաշտոնական քննության ժամանակ, երբ դրանք կիրառվում են ներպետական դատարաններում քննություն իրականացնելիս. քննությունները, ընդհանուր առմամբ, ներառյալ դատական քննության, պետք է բավարարեն օրենքով նախատեսված կյանքի իրավունքը պաշտպանելու պոզիտիվ պարտականության պահանջները: Ներպետական դատարանները չպետք է որևէ պարագայում թույլ տան, որպեսզի կյանքի համար վտանգավոր հանցագործությունները մնան անպատիժ[4]:

Որպեսզի քննությունը լինի արդյունավետ, քննությունն իրականացնող և դրա համար պատասխանատու անձինք պետք է լինեն անկախ և անկողմնակալ, թե օրենքով և, թե գործնականում: Դա նշանակում է՝ ոչ միայն դեպքերի հետ կապ ունեցողների հետ աստիճանակարգային և ինստիտուցիոնալ կապի բացակայության, այլ նաև՝ գործնական անկախության: Կոնվեցիայի 2-րդ հոդվածի ներքո պահանջվող արդյունավետ քննությունը նպատակ է հետապնդում ապահովել հասարակության վստահություն իշխանությունների նկատմամբ՝ վերջիններիս կողմից օրենքի պահպանման հարցում, կանխելու համար ապօրինի գործողությունների նկատմամբ հանդուրժողականության և համագործակցության դրսևորումներն այն գործերով, որոնցում ներգրաված են պետական մարմիններ կամ պաշտոնյաներ՝ ապահովելու համար նրանց պատասխանատվությունն իրենց պատասխանատվությամբ կատարված սպանությունների համար: <u>Բոլոր դեպքերում տուժողի իրավահաջորդը պետք է ներգրավված լինի այդ ընթացակարգերի իրականացման գործընթացներում, որոնք երաշխավորում են նրանց օրինական շահերի ապահովումը[5]:</u>

3.տես՝ Անգելովան և Ալինն ընդդեմ Բուլղարիայի, թիվ 55523/00, կետ 92,ՄԻԵԴ 2007 IX և Ռանցևն ընդդեմ Կիպրոսի և Ռուսաստանի, թիվ 25965 /04, կետ 232, ՄԻԵԴ 2010 :

4 (տես՝ Մոիսեևն ընդդեմ Լեհաստանի, թիվ 11818/02, իկետ 53, 2009թ. մարտի 24 և Իսաթ Բայրամն ընդդեմ Թուրքիայի, թիվ 75535/01, կետ 47, 2009թ. մայիսի 26):

5. տես՝ Ռամսահայն և այլոք ընդդեմ Նիդեռլանդների [GC], թիվ 52391/99, կետեր 321 332,ՄԻԵԴ 2007 ..., Խայնդրավան և Զամաշվիլին ընդդեմ Վրաստանի, թիվ 18183/05, կետեր 59-61,2010թ. հունիսի 8, ԹԱսին Աքարն ընդդեմ Թուրքիայի [GC], թիվ 26307/95, կետեր 222 225, ՄԻԵԴ 2004III և Գյուլն ընդդեմ Թուրքիայի, 1998թ. հուլիսի 27, կետ 82, Վճիռների և Որոշումների ժողովածու 1998-IV):

5. տես՝ վերը նշված Kudla, § 157 :

4.3.Մարդու իրավունքների եվրոպական դատարանը իր մի շարք որոշումներով հայտնել է, որ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով երաշխավորված իրավունքները ոչ թե տեսական կամ պատրանքային են, այլ գործնական են և արդյունավետ[6]:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Կոնվենցիայի 2-րդ և 3-րդ հոդվածները մեկնաբանել է որպես այդ դրույթների նյութաիրավական կողմերի ենթադրյալ խախտման կապակցությամբ արդյունավետ քննություն իրականացնելու դատավարական պարտականություն սահմանող նորմեր՝ հաշվի առնելով այս իրավունքների հիմնարար բնույթը[7]:

Մասնավորապես, սույն գործին վերաբերելի մասով Կոնվենցիայի 2-րդ հոդվածով ամրագրված կյանքի իրավունքի շրջանակներում արդյունավետ քննություն իրականացնելու պարտականությունը (կյանքի իրավունքի դատավարական բաղադրիչը) բխում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում հաստատված այն իրավական դիրքորոշումից, որ եթե առողջ անձը ոստիկանության կողմից արգելանքի է վերցվել և հետագայում մահացել, ապա պետությունը պարտավոր է ներկայացնել անձի մահվան հանգեցրած իրադարձությունների համոզիչ բացատրություն, և այն չներկայացնելու դեպքում պետությունը խախտած կլինի Կոնվենցիայի 2-րդ հոդվածը[8]: Վերը վկայակոչված մեկնաբանություններից ելնելով կարելի պնդել, որ մինչ այժմ խախտված են վստահորդիս Կոնվեցիայի 2-րդ հոդվածով երաշխավորված իրավունքները:

Սույն դեպքում Հայկ Մովսիսյանը ՀՀ ոստիկանության կողմից արգելանքի է վերցվել և հետագայում մահացել, ՀՀ կողմից վստահված ԼՂՀ ՔԿՀ-ում, ուստի վերը վկայակոչված նախադեպերը սույն գործի փաստական հանգամանքների հետ նույնական են և ենթակա են կիրառման:

4.4. Մարդու Իրավունքների Եվրոպական Դատարանի կողմից կայացված մի շարք վճիռներում սահմանվել է, որ Կոնվենցիայի 8-րդ հոդվածը պետության համար առաջացնում է ոչ միայն նեգատիվ պարտականություններ (ձեռնպահ մնալու համապատասխան ազատություններին միջամտելուց), այլ նաև պոզիտիվ պարտականություններ (inter alia, սահմանելու տուժողների իրավունքների քրեադատավարական պաշտպանության համարժեք կառուցակարգեր):

Մասնավորապես՝Յանկովիչի վերաբերյալ ՄԻԵԴ վճռի 25-րդ կետում արտահայտել է հետևյալ դիրքորոշումը՝ Խորվաթիայի քրեադատավարական օրենսդրությունը նախատեսում էր տուժողի իրավունքների պաշտպանության մի շարք կառուցակարգեր, այդ թվում՝ սուբսիդիար մեղադրողի գործառույթ իրականացնելու իրավունքը, այնուհանդերձ, Յանկովիչի գործով ՄԻԵԴ-ը գտել է, որ պետությունը չի կատարել իր այդ պոզիտիվ պարտականությունը,

6 .տե՛ս, օրինակ, B. v. the United Kingdom, 1987 թվականի հուլիսի 8-ի վճիռը, գանգատ թիվ 9840/82, կետ 63, M.C. v. Bulgaria, 2003 թվականի դեկտեմբերի 4-ի վճիռը, գանգատ թիվ 39272/98, 148-153 կետերը, և Cyprus v. Turkey, 2001 թվականի մայիսի 10-ի Մեծ պալատի վճիռը, գանգատ թիվ 25781/94, կետ 147:

7 տե՛ս օրինակ Mccann and Others v. The United Kingdom, 1995 թվականի սեպտեմբերի 27-ի վճիռը, գանգատ թիվ 18984/91, 157-164 կետերը, Ergi v. Turkey, 1998 թվականի հուլիսի 28-ի վճիռը, գանգատ թիվ 23818/94, կետ 82, Mastromatteo v. Italy, 2002 թվականի հոկտեմբերի 24-ի Մեծ պալատի վճիռը, գանգատ թիվ 37703/97, կետ 89, և Assenov and Others v. Bulgaria, 1998 թվականի հոկտեմբերի 28-ի վճիռը, գանգատ թիվ 24760/94, 101-106 կետեր:

8. տես Velikova v. Bulgaria, 2000 թվականի մայիսի 18-ի վճիռը, գանգատ թիվ 41488/98, կետ 70, mutatis mutandis, Selmouni v. France, 2002 թվականի հոկտեմբերի 24-ի Մեծ պալատի վճիռը, գանգատ թիվ 25803/94, կետ 87:

քանի որ, տուժողին իրական հնարավորություն չի տրվել իրականացնելու իր դեմ ոտնձգություն թույլ տված անձի քրեական հետապնդում[9]:

Յանկովիչն ընդդեմ Խորվաթիայի գործով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումը սույն գործի փաստերի վրա տարածելով՝ կարող ենք արձանագրել, որ տուժողի իրավահաջորդ չճանաչելով, տուժողին հնարավորություն չի տրվում իրականացնել իր շահերի արդյունավետ պաշտպանություն:

Քրեական արդարադատության համակարգում տուժողի պահանջմունքները բավարարելու և շահերը պաշտպանելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու պետությունների պարտավորությունը սահմանված է նաև ՄԱԿ-ի 1985 թ. նոյեմբերի 29-ի Գլխավոր ասամբլեայի 40/34 բանաձևի 4-րդ կետով, որի համաձայն՝ հանցագործությունից տուժողները ներպետական օրենսդրությանը համապատասխան պետք է ունենան արդարադատության մատչելիության և իրենց պատճառված վնասի արագ փոխհատուցման իրավունք:

Հռչակագրի 6-րդ կետի համաձայն՝ անհրաժեշտ է օժանդակել այն բանին, որ դատական և վարչական ընթացակարգերը, ըստ էության համապատասխանեն հանցագործության զոհերի պահանջներին, այդ թվում՝

բ) վարույթի ցանկացած փուլում գործի էության վերաբերյալ տուժողներին կարծիք արտահայտելու հնարավորություն ապահովելու և այդ կարծիքները քննարկելու եղանակով, հատկապես, երբ տվյալ հարցը վերաբերվում է տուժողին:

4.5. Կոնվեցիայի 1-ի Հոդվածի ուժով (որտեղ սահմանված է, որ «բարձր պայմանավորվող կողմերն իրենց իրավազորության ներքո գտնվող յուրաքանչյուրի համար ապահովում են այն իրավունքներն ու ազատությունները, որոնք սահմանված են սույն Կոնվենցիայի I բաժնում»), երաշխավորված իրավունքների և ազատությունների իրականացման և ապահովման առաջնային պատասխանատվությունը դրված է ազգային իշխանությունների վրա: Այդ սուբսիդիար բնույթը արտահայտված է Կոնվենցիայի 13 և 35 § 1 հոդվածներում[10]:

Կոնվենցիայի 13-րդ հոդվածով երաշխավորվում է Կոնվենցիայով սահմանված իրավունքների և ազատությունների պարտադիր կիրառումն ապահովող իրավական պաշտպանության միջոցների առկայությունը ներպետական մակարդակով: Այդ դրույթի իրականացումն պահանջում է ներպետական իրավական պաշտպանության միջոցների տրամադրումը Կոնվենցիայի հիմքերով ներկայացված «ոչ անհիմն գանգատի» ըստ էության քննության և համապատասխան օգնության տրամադրման համար: Կոնվեցիայի 13-րդ հոդվածով պահանջվող իրավական պաշտպանությունը պետք է լինի «արդյունավետ» ինչպես գործնականում, այնպես էլ օրենքի տեսանկյունից[11]:

Արդյունավետ լինելու համար 13-րդ հոդվածով պահանջվող իրավական պաշտպանության միջոցը պետք է լինի հասանելի գործնականում և նախատեսված օրենսդրությամբ, մասնավորապես այն իմաստով, որ վերջինիս իրականացմանը չպետք է անարդարացիորեն խոչընդոտեն պետության իշխանությունների գործողությունները կամ անգործողությունը[12]:

---

9. տե՛ս Յանկովիչի վերաբերյալ ՄԻԵԴ վճռի 57-րդ կետ): Դրա հիման վրա արձանագրվել է Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում (տե՛ս Յանկովիչի վերաբերյալ ՄԻԵԴ վճռի 58-րդ կետ:
10. տես՝ «Kudła ընդդեմ Լեհաստանի» [ՄՊ], գանգատ թիվ 30210/96, § 152, ՄԻԵԴ 2000-XI:
11. տես՝ վերը նշված Kudla գործով, 157-րդ կետը:
12. տես՝ «Çakıcı ընդդեմ Թուրքիայի» [ՄՊ], գանգատ թիվ 23657/94, § 112, ՄԻԵԴ 1999-IV:

Հատուկ ուշադրություն պետք է դարձնել պաշտպանության գործողության արագությանը, քանի որ չի բացառվում, որ պաշտպանության արդյունավետությունը կարող է տուժել այն տրամադրելու գործընթացի չափազանց մեծ տևողության պատճառով[13]:

Սույն դեպքում հետաքննությունը և նախաքննությունը չի իրականացվել հանգամանալից, արդյունավետ անաչառ, պետության կողմից չի ներկայացվել Հայկ Մովսիսյանի մահվան հանգեցրած իրադարձությունների համոզիչ բացատրության, որը կհանգեցներ մեղավորների բացահայտմանը և պատժմանը, քննությունը հասանելի չի եղել զոհի ընտանիքի համար՝ նպատակ ունենալով թաքցնելու գործում առկա հանցագործությունը բացահայտող տեղեկությունները:

<u>4.6. ՀՀ անունից հանդես եկած դատարանի կողմից կատարված դատական քննությանը և կայացված որոշման բովանդակությանը՝ Ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետությունում արդյունավետ պաշտպանության մեխանիզմ չլինելու վերաբերյալ պնդումներ.</u>

4.6.1. Վիճարկվող որոշման 4-րդ գլուխը վերնագրված է դատարանի պատճառաբանությունները և եզրակացությունը, որը սկսվում ՀՀ Սահմանադրության 21-րդ հոդվածի, ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ, 5-րդ, 18-րդ հոդվածների և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ, 35-րդ, 263-րդ հոդվածների ուղակիորեն մեջբերումով: Դատարանի որոշման նման մեջբերումները զուրկ են ընդհանրապես իրավական վերլուծությունից և առհասարակ ընթերցողի համար անհասկանալի, թե՝ դատարանի կողմից վկայակոչված վերը նշված հոդվածները առհասարակ վիճարկվող հարցերի հետ ինչ կապ ունեն կամ դտարանի որ վերլուծություն է կապված վերը նշված իրավական նորմերի հետ:

Վիճարկվող որոշման նույն բաժնում անմիջապես նախորդ կետում նշված իրավական նորմերից հետո, դատարանը փորձել է պատասխանել՝ բողոքաբերիս փաստարկների այն մասին, որ նախաքննության մարմնի կողմից չեն ձեռնարկվել բոլոր միջոցները՝ հանցագործությունը բացահայտելու ուղղությամբ, նախաքննության ընթացքում չեն պարզվել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքները: Տվյալ բաժնի պատճառաբանությունը, որը ենթադրաբար պետք է ուղղված լիներ նախաքննության մարմնի հանցագործությունը բացահայտելուն ուղղված ձեռնարկած և իրականացվելիք բոլոր միջոցառումների առկայությանը կամ բացակայությանը, չի կատարվել, փոխարենը դատարանի կողմից դիմումատուիս բարձացված հարցերին պատասխանելու փոխարեն, ներկայացվել է այնպիսի փաստեր, որոնք դիմումատուիս կողմից չեն վիճարկվել, օրինակ՝ մեջբերում եմ. «Համաձայն դատարանին ներկայացված նյութերի՝ բողոքում նշված հանգամանքների շուրջ նախաքննության ընթացքում ձեռք բերված տվյալներով հաստատվել է, որ Հայկ Մովսիսյանը ճանաչվելով պիտանի շարային ծառայության համար, 2011թ. հունիսի 15-ին, Հրազդանի զինվորական կոմիսարիատից զորակոչվել է ժամկետային զինվորական ծառայության և նշանակվել է որպես հրաձիգ-նռնակաձիգի օգնական»: (.....):

---

13 (տես՝ «Doran ընդդեմ Իռլանդիայի», գանգատ թիվ 50389/99, § 57, ՄԻԵԴ 2003-X):

4.6.2. Դատարանը իր որոշման պատճառաբանություններ բաժնում մեջբերելով այնպիսի փաստեր, որոնք դիմումատուիս կողմից չեն վիճարկվել և ընդհանրապես ապացուցման կամ հետազոտման անհրաժեշտություն էլ չունեն, շարունակելով իր միտքը, եկել է նման «եզրահանգման», մեջբերում եմ՝ «Բողոքում նշված պատճառաբանությունները հերքվել են նաև դեպքի վայրի, դիակի, իրեղեն ապացույցների, անձնական գործի զննության արձանագրություններով, կրկնակի դատաբժշկական փորձաքննության թիվ 1077/19/կ եզրակացությունով, ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի վարույթում քննված քրեական գործով ձեռք բերված և հետազոտված, ինչպես նաև վարույթն իրականացնող մարմնի կողմից ձեռք բերված այլ փաստաթղթերով և ապացույցներով:

Դատարանի նման պատճառաբանությունը առարկայազուրկ է և չի բխում դատարանի առջև բարձացված հարցերից[14], ավելին դատարանի այն փաստարկը, որ իբր ուսումնասիրել է ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի վարույթում քննված քրեական գործով ձեռք բերված և հետազոտված, ինչպես նաև վարույթն իրականացնող մարմնի կողմից ձեռք բերված այլ փաստաթղթեր և ապացույցներ՝ ուղղակի չեն համապատասխանում իրականությանը: Սույն գործի շրջանակներում դատարանը որպես գործի նյութեր ուսումնասիրել է՝ քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշում, գրություն, ՀՀ Գլխավոր դատախազի որոշումը դիմումատուիս դիմումը մերժելու մասին, դատաբժշկական փորձաքննություն նշանակելու մասին որոշում, դատաբժշկական փորձաքննության թվով 2 եզրակացություն, կրկնակի դատաբժշկական փորձաքննություն նշանակելու մասին որոշում, ՀՀ վճռաբեկ դատարանի որոշում, այլ փաստաթղթեր, մասնավորապես, ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի վարույթում քննված քրեական գործով ձեռք բերված և հետազոտված, ինչպես նաև վարույթն իրականացնող մարմնի կողմից ձեռք բերված այլ փաստաթղթեր և ապացույցներ չեն եղել, իսկ քրեական գործի ամբողջական նյութերը դատարանը չի պահանջել և չի ունեցել գործը քննելու ընթացքում, հետևաբար չէր կարող ուսումնասիրել այլ ապացույցներ[15]:

5. Նախաքննության մարմնի և դատարանի կողմից չեն ձեռնարկվել բոլոր միջոցները հանցագործությունը բացահայտելու ուղղությամբ.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի համաձայն՝ «Հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը պարտավոր են իրենց իրավասության սահմաններում քրեական գործ հարուցել հանցագործության հատկանիշներ հայտնաբերելու յուրաքանչյուր դեպքում, օրենքով նախատեսված բոլոր միջոցառումները ձեռնարկել հանցագործություն կատարած անձանց և հանցագործության, ինչպես նաև դրա կատարման հանգամանքները բացահայտելու համար: (.....):

14. Տես 2014 հուլիսի 25-ին դատարան ներկայացված դիմումի 32-րդ գլխի 3.2.1-3.2.14 կետերը:
15. Տես սույն բողոքի 3-րդ գլուխը

Մասնավորապես, նախաքննության մարմինը նախաքննության շրջանակներում չի պարզել.

5.1. Օրինական էր արդյոք Հայկ Մովսիսյանին Լեռնային Ղարաբաղում ծառայելու ուղարկած լիազոր մարմնի որոշումը:

5.2. Օրինական էր արդյոք Հայկ Մովսիսյանին ԼՂՀ ոստիկանության ՔԿՎ-ն քննչական մեկուսարան պատիժը կրելու վերաբերյալ լիազոր մարմնի որոշումը:

5.3. Արդյոք հնարավոր էր, որ Հայկ Մովսիսյանը 6-7 րոպեների ընթացքում սավանի միջոցով կախվեր 8-րդ խցում առկա պատուհանի փակելու ամրակից, որը կառաջացներ նրա մահը[16]:

5.4. Ըստ Ժիրայր Հարությունյանի ցուցմունքի[17] նա ստուգել է Հայկ Մովսիսյանի պուլսը և պարզել է, որ պույլսը դեռ առկա է, որին հաջորդել է նրա կողմից Հ. Մովսիսյանին շուրջ 10 րոպե արհեստական շնչառություն և սրտի մերսումը, որի արդյունքում վերջինիս աչքերի բիբերը մեծացել են, միզաթափվել է, որովայնը ուռել է, քանի, որ տված արհեստական շնչառությունը լցվել է ստամոքսը:

5.4.1. Արդյոք զարկերակային ճնշում ունենալու դեպքում անհրաժեշտ էր Հայկ Մովսիսյանին արհեստական շնչառությունը և սրտի մերսումը, թե ոչ:

5.4.2. Կարող էր արդյոք սխալ արհեստական շնչառություն տալու արդյունքում վրա հասներ դեռ կենդանի Հ.Մովսիսյանի մահը:

5.4.3. Ինչ բժշկական միջամտության արդյունքում կարող էր Հ. Մովսիսյանը կենդանի մնալ:

5.5. ԼՂՀ ոստիկանության ՔԿՎ-ն քննչական մեկուսարանի վարչակազմի կողմից տարվել են արդյոք Հ. Մովսիսյանի հետ հոգեբանական աշխատանքներ, թե ոչ:

5.6. Ըստ Սարիբեկ Հակոբյանի[18] ցուցմունքի Հ. Մովսիսյանը իրեն մեկուսացված և տարօրինակ է պահել, միայն պատմել է, որ պառկած է եղել հոգեբուժարանում, ազատված է զինորական ծառայությունից և ունի զինգրքույկ, սակայն բանակից խուսափելու համար բռնել և անօրեն դատել են: Իրենց հարցերին այո կամ ոչ է պատասխանել դրա համար մտածել են որ շփվել չի ցանկանում: Հաճախակի հրաժարվում էր հաց ուտելուց պատճառաբանելով, որ ախորժակ չունի: Օրերը անց է կացրել պատին հենված աթոռին քնած վիճակում:

5.6.1. Արդյոք Հ. Մովսիսյանի դրսևորած վարքագիծը համահունչ չէր ՀՀ պաշտպանության նախարարության Կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի 2011թ. օգոստոսի 2-ին թիվ 1445 որոշմամբ ախտորոշված «Օրգանական փսիխոպաթոնման խանգարում, դեզատապտացիոն դեկոմենսացիա սուիցիդի փորձով» որի պատճառով, ՀՀ պաշտպանության նախարարության 2010 թվականի փետրվարի 26-ի թիվ 175 հրամանի 2 «բ» հոդվածի 1-ին սյունակի համաձայն՝ վերջինս «Պիտանի չէ զինծառայության խաղաղ ժամանակ, պիտանի է ոչ շարային ծառայության պատերազմի ժամանակ»:

5.6.2. Արդյոք ՀՀ պաշտպանության նախարարության Կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի 2011թ. օգոստոսի 30-ի թիվ 49112 փորձագիտական եզրակացությունը, որի

---

16. Տես 2013թ. մարտի 18-ի քրեական գործի մասը կարճելու որոշման Միքայելի Լևոնի Գրիգորյանի ցուցմունքը.

17. Տես 2013թ. մարտի 18-ի քրեական գործի մասը կարճելու որոշման ժիրայր Հարությունյանի ցուցմունքը

18 Տես 2013թ. մարտի 18-ի քրեական գործի մասը կարճելու որոշման ԼՂՀ ոստիկանության ՔԿՎ-ն քննչական մեկուսարանի 8-րդ խցի կալանավոր Սարիբեկ Արշավիրի Հակոբյանի ցուցմունքը:

արդյունքում ՀՀ պաշտպանության նախարարի 2011թ. սեպտեմբերի 17-ի թիվ 1077 հրամանով Հայկ Մովսիսյանի վաղաժամկետ պահեստազոր զորացրվելը առողջական վիճակի պատճառով օրինական էր, թե ոչ:

5.6.3. Արդյոք ՀՀ ՊՆ 2011թ. սեպտեմբերի 17-ի թիվ 1077 հրամանը՝ Հայկ Մովսիսյանին վաղաժամկետ պահեստազոր զորացրելու մասին, քրեական գործ հարուցելու հիմք չէր:

5.7. Արդյոք Հ. Մովսիսյանի կողմից ինքնասպանություն գործելու հանգամանքը չի հերքել ՀՀ ԱՆ կից ամբուլատոր դատահոգեբուժական փորձագիտական հանձնաժողովի թիվ 364/11 եզրակացությամբ տրված այն հանգամանքը, որ Հայկ Մովսիսյանը որևէ հոգեկան հիվանդությամբ չի տառապել և չի տառապում:

5.7.1. Արդյոք Հ. Մովսիսյանի կողմից ինքնասպանություն գործելուց հետո առկա չէր ՀՀ ԱՆ կից ամբուլատոր դատահոգեբուժական փորձագիտական հանձնաժողովի թիվ 364/11 եզրակացությունը տալու համար քրեական պատասխանատվության ենթարկելու բավարար հիմքեր:

5.8. Ըստ Սարիբեկ Հակոբյանի[19] ցուցմունքի 2012թ. նոյեմբերի 27-ին Հ. Մովսիսյանը ոչ նախաճաշել ,է ոչ էլ ճաշել է՝ հայտնելով, որ ցանկություն չունի և քնել է մինչև ժամը 18:00: Սակայն լավ ընթրել է բոլորի հետ, որից հետո միասին մեկ անգամ «Մաֆյա» են խաղացել, հետո գնացել է զուգարան ու քայլել խցով: Երբ ժամը 21:30-ին ազդանշան են տվել քնի նախապատրաստվելու համար իրենք շարունակել են խաղը, սակայն Հ. Մովսիսյանը լվացվել և պառկել է մահճակալին:

5.8.1. Արդյոք Հայկ Մովսիսյանի և նրա խցակիցների միջև «Մաֆյա» խաղալու արդյունքում Հ. Մովսիսյանը գումար է պարտվել, թե՝ ոչ:

5.8.2. Արդյոք Հայկ Մովսիսյանի և նրա խցակիցների միջև «Մաֆյա» խաղալը կարող էր պատճառ հանդիսանալ Հ. Մովսիսյանի ինքնասպանության գործելուն, թե՝ ոչ:

5.9. Արդյոք ինքնասպանության հակում ունեցող անձը ենթակա է զինվորական ծառայության, թե՝ ոչ:

5.10. Արդյոք զորամասի հրամանատարի աշխատասենյակում Հ. Մովսիսյանի կողմից կատարված ինքնավնասումը պատճառահետևանքային կապով կապված չէր ինքնասպանության հետ:

5.11. Կատարված նախաքննությամբ չի պարզվել Հ. Մովսիսյանի աջ նախաբազուկի միջին երրորդականի հետին մակերեսին կենդանության օրոք պատճառված բութ առարկայից առաջացած մարմնական վնասվածքի առաջացման պատճառները:

5.12. Ըստ 2013թ. մարտի 18-ի քրեական գործի մասը կարճելու մասին որոշման,[20] պարզվել է, որ Հ. Մովսիսյանը, տառապելով «Օրգանական փսիխոպաթոնման խանգարում, դեզատապտացիոն դեկոմենսացիա սուիցիդի փորձով» հիվանդությամբ, ՀՀ Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի 2012թ. նոյեմբերի 20-ի դատավճռով 3 տարի ժամկետով ազատազրկման դատապարտվելով, ինքնասպանություն կատարելու նպատակով, 7 օր անց՝ 2012թ. նոյեմբերի 27-ի լույս 28-ի գիշերը ժամը 24:50-ից 01:00-ի սահմաններում ԼՂՀ քննչական մեկուսարանի թիվ 8-րդ խցում սավանով կախվել է:

---

[19] Տես 2013թ. մարտի 18-ի քրեական գործի մասը կարճելու որոշման ԼՂՀ ոստիկանության ՔԿՎ-ն քննչական մեկուսարանի 8-րդ խցի կալանավոր Սարիբեկ Արշավիրի Հակոբյանի ցուցմունքը:

20 Տես 2013թ. մարտի 18-ի քրեական գործի մասը կարճելու քննիչ Գ. Ամիրյանի որոշումը:

5.12.1. Արդյոք «Օրգանական փսիխոպաթոնման խանգարում, դեզատապտացիոն դեկոմենսացիա սուիցիդի փորձով» հիվանդությամբ անձին դատապարտելը հանցագործություն չէր:

5.12.2. Արդյոք «Օրգանական փսիխոպաթոնման խանգարում, դեզատապտացիոն դեկոմենսացիա սուիցիդի փորձով», հիվանդությամբ տառապող անձի նկատմամբ քրեական հետապնդում և դատապարտում իրականացրած պաշտոնական անձանց գործողություններում առկա չէր հանցագործություն:

5.13. Ըստ 2013թ. մարտի 18-ի քրեական գործի մասը կարճելու մասին որոշման[21], Հայկ Մովսիսյանը պահվել է ԼՂՀ ՔԿՎ քննչական մեկուսարանի 8-րդ խցում որը, ունեցել է 6x4, այսինքն՝ 24 քմ. տարածք, որտեղ առկա է եղել թվով 5 հատ երկհարկանի մահճակալ, խուցը նախատեսված է եղել 10 հոգու համար, սակայն տվյալ պահին գտնվել է 8 անձ:

Նշված մեկուսարանը, ներքին կարգի համաձայն ունեցել է հստակ վերկացի ժամ և քնի հրահանգ, որին չենթարկվելու դեպքում դատապարտյալները և ազատազրկված անձիք կարող են ենթարկվել կարգապահական տուժերի:

Ըստ մեջբերված փաստերի՝ Հայկ Մովսիսյանի պահման պայմանները չեն համապատասխանել ոչ միջազգային նորմերին, ոչ ՀՀ գործող օրենքներին և ենթաօրենսդրական ակտերին: Այսպես, ՄԻԵԴ Կալաշնիկովն ընդդեմ Ռուսաստանի Դաշնության[22] կայացված որոշմամբ գտել է, որ դիմողի կալանքի պայմանները, **հատկապես խցի լեփ-լեցուն լինելը, հակասանիտարական վիճակը և դիմողի առողջական վիճակի և բարօրության վրա դրա ունեցած բացասական ազդեցությունը,** /.../, **համարվում են արժանապատվությունը ստորացնող վերաբերմունք**:

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 73-րդ հոդվածը սահմանում է դատապարտյալին հատկացվող բնակելի տարածության նվազագույն չափը, մասնավորապես, համաձայն սույն հոդվածի՝ « /.../ Ուղղիչ հիմնարկում մեկ դատապարտյալին հատկացվող բնակելի տարածության չափը չի կարող պակաս լինել չորս քառակուսի մետրից»:

Նշված իրավունքն ամրագրված է նաև «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ, համաձայն որի՝ «/.../ Ձերբակալված և կալանավորված անձանց հատկացված բնակելի տարածության չափը չի կարող պակաս լինել չորս քառակուսի մետրից՝ յուրաքանչյուր անձի համար»:

Հայկ Մովսիսյանը պահվել ԼՂՀ ՔԿՎ քննչական մեկուսարանի 8-րդ խցում 8 հոգով, որը ունեցել է 24 քմ. տարածություն, հետևաբար յուրաքանչյուր ազատազրկված անձին բաժին է հասել 3 քմ: Ավելին մեկուսարանը իր տարօրինակ ռեժիմներով (վերկաց և 21:30 ժամին քուն հրահանգներով, որին չենթարկվելը կարգապահական տուժի ենթարկվելու հիմք է), ինչպես նաև զուգորդվելով, Հ Մովսիսյանի սույն բողոքի 3.2.12. կետում նշված առողջական խնդիրներով, ստորացրել են Հ. Մովսիսյանը արժանապատվությունը:

5.13.1. Արդյոք մեկուսարանի ներքին կանոնակարգը, խցային պայմանները կարող էին Հ. Մովսիսյանին ինքնասպանության հասցնել, թե՝ ոչ:

---

21 Տես 2013թ. մարտի 18-ի քրեական գործի մասը կարճելու քննիչ Գ. Ամիրյանի որոշման վերջին էջը:

22 Տես՝ ՄԻԵԴ գանգատ թիվ 47095/99 գործով 2002 թվականի հուլիսի 15-ին կայացրած որոշումը

5.14. Հայկ Մովսիսյանին ԼՂՀ ՔԿՎ քննչական մեկուսարանում պահելը օրինական էր, թե՝ ոչ:

Ելնելով վերը թվարկվածից կարող ենք պնդել, որ նախաքննության մարմնի կողմից սույն գործի շրջանակներում չի ձեռնարկվել <u>օրենքով նախատեսված բոլոր միջոցառումները հանցագործության, ինչպես նաև դրա կատարման հանգամանքները բացահայտելու համար:</u>

Նախաքննության մարմնի վերը թվարկված կանխամտածված անգործության կամ դիտավորյալ նման գործողությունների արդյունքում չի ապահովվել ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածով և Մարդու իրավունքների եվրոպական կոնվեցիայի 2-րդ, 3-րդ, 6-րդ և 13-րդ հոդվածներով երաշխավորված իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը:

<u>6. Վերաքննիչ բողոքի պահանջը</u>.

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 209-րդ, 376-րդ, 378-րդ և 381-րդ հոդվածների պահանջները.

ԽՆԴՐՈՒՄ ԵՄ՝

Վերաքննիչ բողոքն ընդունել վարույթ, բեկանել ՀՀ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2014թ. սեպտեմբերի 9-ի որոշումը, ընդունել նոր դատական ակտ, վերացնել ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչ Ա. Բաբայանի 2013թ. դեկտեմբերի 10-ի քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշումը և գործը ուղարկել նախաքննության:

Կից ներկայացնում եմ՝

1. ՀՀ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2014թ. սեպտեմբերի 9-ի որոշման պատճենը:

2. Վերաքննիչ բողոքի օրինակը, դատական ակտ կայացրած դատարանին, ՀՀ հատուկ քննչական ծառայությանը և ՀՀ գլխավոր դատախազություն ուղարկելու վերաբերյալ փոստային կտրոնների պատճենները:

3. ՀՀ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2014թ. սեպտեմբերի 9-ի որոշումը 2014թ. սեպտեմբերի 24-ին ստանալը հավաստող փոստային ծրարի պատճենը:

Դիմողի ներկայացուցիչներ՝ Ա. Սաքունց

Ա. Զալյան

25. 09. 2014թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԿԵՆՏՐՈՆ ԵՎ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՎԱՐՉԱԿԱՆ
ՇՐՋԱՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ
ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆ

0018, ք. Երևան, Տիգրան Մեծի պող. 23/1; հեռ. 547919 ; www.court.am

ԴԴ17Ե-36718
«19» 09 2014թ.

Դիմող՝ Հեղինե Հարությունի Պետրոսյանի
ներկայացուցիչ Արթուր Ալբերտի Սաքունցին
(ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 59)

Ուղարկվում է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի կողմից 2014թ.-ի սեպտեմբերի 09-ին կայացված որոշումը:

Կից՝ որոշումը՝ «3» թերթից:

ԴԱՏԱՎՈՐ՝ Մ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՈՐՈՇՈՒՄ

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր
իրավասության առաջին ատյանի դատարանը
հետևյալ կազմով

նախագահող դատավոր՝ Մ. Մարտիրոսյան,
քարտուղար՝ Ա. Հովհաննիսյան,

մասնակցությամբ՝
բողոքաբեր Ա. Զալյանի,

2014թ. սեպտեմբերի 09-ին, դատարանում, դռնբաց դատական նիստում քննության առնելով Հեղինե Հարությունի Պետրոսյանի ներկայացուցիչներ Արթուր Ալբերտի Սաքունցի և Արայիկ Միքայելի Զայլանի 2014թ.-ի հուլիսի 25-ի բողոքը, որով խնդրել են վերացնել թիվ 62202513 քրեական գործով Հայաստանի Հանրապետության /այսուհետ՝ ՀՀ/ հատուկ քննչական ծառայության հատկապես կարևոր գործերի /այսուհետ ՀԿԳ/ քննիչ Մ. Բաբայանի 2013թ. դեկտեմբերի 10-ի՝ քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշումը և գործն ուղարկել նոր քննության,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

2012թ. նոյեմբերի 28-ին հարուցվել է թիվ 12200712 քրեական գործը՝ կալանավոր Հայկ Արտավազդի Մովսիսյանի ինքնասպանության դեպքի առթիվ:

2013թ. մարտի 19-ին քրեական գործը ՀՀ գլխավոր դատախազության միջոցով ուղարկվել է ՀՀ հատուկ քննչական ծառայություն:

ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչի 2013թ. մարտի 28-ի որոշմամբ թիվ 12200712 քրեական գործի նյութերով, ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել է նոր՝ թիվ 62202513 քրեական գործը՝ Հայկ Մովսիսյանի վերաբերյալ քրեական գործի վարույթն իրականացնող պաշտոնատար անձանց պաշտոնական անփութության ենթադրյալ դեպքի առթիվ: Նույն օրը թիվ 12200712 քրեական գործը միացվել է թիվ 62202513 քրեական գործին:

2013թ. դեկտեմբերի 10-ին ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Մ. Բաբայանի կողմից որոշում է կայացվել թիվ 62202513 քրեական գործով վարույթը կարճելու մասին՝ հանցագործության դեպքի բացակայության հիմքով:

2014թ. հուլիսի 5-ին բողոքաբերները դիմում-բողոք են հասցեագրել ՀՀ գլխավոր դատախազ Գ. Կոստանյանին՝ ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Մ. Բաբայանի՝ քրեական գործով վարույթը կարճելու մասին 2013թ. դեկտեմբերի 10-ի որոշումը վերացնելու և գործը նախաքննության ուղարկելու վերաբերյալ:

ՀՀ գլխավոր դատախազ Գ. Կոստանյանի 2014թ. հուլիսի 14-ի որոշմամբ բողոքը մերժվել է:

Հեղինե Հարությունի Պետրոսյանի ներկայացուցիչներ Արթուր Ալբերտի Սաքունցի և Արայիկ Միքայելի Զայլանի կողմից, 2014թ. հուլիսի 25-ին բողոք է ներկայացվել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան, որով խնդրել են վերացնել թիվ 62202513 քրեական գործով ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Մ. Բաբայանի 2013թ. դեկտեմբերի 10-ի՝ քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

2. Բողոքի հիմքերն ու հիմնավորումները

Բողոքաբերը պատճառաբանել է, որ թիվ 62202513 քրեական գործի շրջանակներում խախտվել է տուժողի և վերջինիս իրավահաջորդի՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 2-րդ, 3-րդ, 6-րդ, 8-րդ, 13-րդ հոդվածներով, ՀՀ Սահմանադրության 18-րդ, 19-րդ, 6-րդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ, 27-րդ հոդվածներով սահմանված իրավունքները, տուժողի իրավահաջորդը նախաքննությանը ներգրավված չի եղել:

Բացի այդ, եթե առողջ անձը ոստիկանության կողմից արգելանքի է վերցվել և հետագայում մահացել է, ապա պետությունը պարտավոր է ներկայացնել անձի մահվանն հանգեցրած իրադարձությունների վերաբերյալ համոզիչ բացատրություն, և այն չներկայացնելու դեպքում պետությունը խախտած կլինի Կոնվենցիայի 2-րդ հոդվածը:

Նախաքննությամբ չի պարզվել՝

-արդյոք հնարավոր էր, որ Հայկ Մովսիսյանը վեցից յոթ րոպեների ընթացքում սավանի միջոցով կախվեր ութերորդ խցում առկա պատուհանի փակելու ամրակից, որը կառաջացներ նրա մահը,

-արդյոք զարկերակային ճնշում ունենալու դեպքում անհրաժեշտ էր Հայկ Մովսիսյանին արհեստական շնչառությունը և սրտի մերսումը, թե ոչ,

-կարող էր արդյոք սխալ արհեստական շնչառություն տալու արդյունքում վրա հասներ դեռ կենդանի Հայկ Մովսիսյանի մահը,

-ինչ բժշկական միջամտության արդյունքում կարող էր Հայկ Մովսիսյանը կենդանի մնալ, ինչպես նաև այլ հարցեր:

Դատարանում բողոքաբեր Ա. Զալյանը հայտարարեց, որ պնդում է բողոքն ամբողջությամբ:

3. Բողոքի դեմ ներկայացված առարկությունները

ՀՀ հատուկ քննչական ծառայության պետի տեղակալ Մ. Բաբայանն իր 2014թ. օգոստոսի 06-ի թիվ 18-59/կգ-13 և 2014թ. սեպտեմբերի 04-ի թիվ 18-59/կգ-14 գրություններով դատարան է ուղարկել բողոքի վերաբերյալ նյութերը, խնդրել է բողոքը քննել ՀՀ հատուկ քննչական ծառայության ներկայացուցչի բացակայությամբ: 2014թ. օգոստոսի 06-ի թիվ 18-59/կգ-13 գրությամբ խնդրել է հաշվի առնել քրեական գործով վարույթը կարճելու, բողոքը մերժելու մասին որոշումներում բերված փաստարկները և բողոքը մերժել՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

4. Դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Ուսումնասիրելով բողոքն ու դրա վերաբերյալ նյութերը՝ դատարանը գտնում է, որ բողոքն ամբողջությամբ անհիմն է և ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ Սահմանադրության 21-րդ հոդվածի համաձայն՝

«Հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

Մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը: Չփարատված կասկածները մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի:»:

ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝

«Քրեական պատասխանատվության միակ հիմքը հանցանք, այսինքն՝ այնպիսի արարք կատարելն է, որն իր մեջ պարունակում է քրեական օրենքով նախատեսված հանցակազմի բոլոր հատկանիշները:»:

Նույն օրենսգրքի 5-րդ հոդվածի համաձայն՝

«1. Արարքի հանցավորությունը, դրան պատասխանատվությունը և քրեաիրավական այլ հետևանքները որոշվում են միայն քրեական օրենքով:

2. Քրեական օրենքն անալոգիայով կիրառելն արգելվում է:»:

Նույն օրենսգրքի 18-րդ հոդվածի համաձայն՝

համար վտանգավոր այն արարքը, որը նախատեսված է սույն օրենսգրքով:

(...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդվածի համաձայն՝

«1. Հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը, դատարանը, ինչպես նաև քրեական դատավարությանը մասնակցող այլ անձինք պարտավոր են պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, սույն օրենսգիրքը և մյուս օրենքները:

2. Ոչ ոք չի կարող քրեական գործով ձերբակալվել, խուզարկվել, կալանավորվել, դատապարտվել, ենթարկվել բերման և դատավարական հարկադրանքի այլ միջոցների, ինչպես նաև իրավունքների ու ազատությունների այլ սահմանափակումների այլ կերպ, քան օրենքով սահմանված հիմքերով և կարգով:»:

Նույն օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝

«1. Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե՝

1) բացակայում է հանցագործության դեպքը.

(...)»:

Նույն օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝

«1. Քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը դրա պատճենն ստանալու պահից 7 օրվա ընթացքում կասկածյալի, մեղադրյալի, ամբաստանյալի, նրանց պաշտպանների, տուժողի, նրա ներկայացուցչի, քաղաքացիական հայցվորի, քաղաքացիական պատասխանողի կամ նրանց ներկայացուցիչների, ինչպես նաև այն ֆիզիկական անձի կամ իրավաբանական անձի ներկայացուցչի կողմից, որոնց հայտարարության հիման վրա հարուցվել է քրեական գործը, կարող է բողոքարկվել վերադաս դատախազին:

2. Դատախազը բողոքը ստանալու պահից 7 օրվա ընթացքում որոշում է կայացնում բողոքը մերժելու կամ բավարարելու մասին: Կայացված որոշման պատճենն անհապաղ ուղարկվում է բողոքը ներկայացնող անձին:

(...)»:

Բողոքաբերի պատճառաբանություններն այն մասին, որ նախաքննության մարմնի կողմից չեն ձեռնարկվել բոլոր միջոցները՝ հանցագործությունը բացահայտելու ուղղությամբ, նախաքննության ընթացքում չեն պարզվել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքներ՝ անհիմն են: Համաձայն դատարանին ներկայացված նյութերի՝ բողոքում նշված հանգամանքների շուրջ նախաքննության ընթացքում ձեռք բերված տվյալներով հաստատվել է, որ Հայկ Մովսիսյանը ճանաչվելով պիտանի շարային ծառայության համար, 2011թ. հունիսի 15-ին, Հրազդանի զինվորական կոմիսարիատից զորակոչվել է ժամկետային զինվորական ծառայության և նշանակվել է որպես հրաձիգ-նռնակաձիգի օգնական:

Դժվարությամբ համակերպվելով զինվորական ծառայությանը՝ նա հրաժարվել է կրել զինվորական համազգեստը, կատարել զինվորական պարտականությունները, ինքնակամ լքել է զորամասը, սակայն հայտնաբերվել է զորամասի հրամանատարի տեղակալի կողմից և վերադարձվել է զորամաս:

Գումարտակի հրամանատարի աշխատասենյակում, զրույցի ժամանակ նա նյարդայնացել է, կորցրել է ինքնատիրապետումը և գրպանից հանելով սափրվելու սայրը՝ ինքն իրեն հասցրել է ձախ նախաբազկի բազմաթիվ կտրվածքներ: Նույն օրը տեղափոխվել է զինվորական հոսպիտալ, ապա ստացիոնար բուժման՝ Երևանի կայազորային զինվորական հոսպիտալի բաժանմունքում:

Փաստի առթիվ 2011թ. սեպտեմբերի 14-ին ՀՀ պաշտպանության նախարարության 3-րդ կայազորային քննչական բաժնում, ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 908553.11 քրեական գործը:

2011թ. սեպտեմբերի 14-ին որոշում է կայացվել Հայկ Մովսիսյանին նկատմամբ զորամասն ինքնակամ թողնելու կապակցությամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին՝ հանցակազմի բացակայության հիմքով:

2011թ. սեպտեմբերի 29-ին որոշում է կայացվել Հայկ Մովսիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի 2-րդ մասով մեղադրանք առաջադրելու մասին և նրա

նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը: Հայկ Մովսիսյանի վերաբերյալ քրեական գործով մեղադրական եզրակացությունը հաստատվել և գործն ուղարկվել է ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան: Այդ դատարանի 2012թ. հունվարի 31-ի որոշմամբ Հայկ Մովսիսյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց չհեռանալու մասին ստորագրությունը փոփոխվել, նրա նկատմամբ խափանման միջոց է ընտրվել կալանավորումը և հայտարարվել է նրա հետախուզումը:

2012թ. հուլիսի 20-ին Հայկ Մովսիսյանը հայտնաբերվել է «Զվարթնոց» օդանավակայանում և կալանավորվել է:

ՍԴ/0389/01/11 քրեական գործով ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012թ. նոյեմբերի 20-ի դատավճռով Հայկ Մովսիսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի 2-րդ մասով և դատապարտվել է ազատազրկման երեք տարի ժամկետով, պատժի կրման սկիզբը հաշվելով 2012թ. հուլիսի 20-ից:

Հայկ Մովսիսյանի մահը վեցից յոթ րոպեների ընթացքում սավանի միջոցով կախվելու հետևանքով առաջանալու, զարկերակային ճնշում ունենալու դեպքում Հայկ Մովսիսյանին արհեստական շնչառություն և սրտի մերսում կատարելու անհրաժեշտություն լինելու, Հայկ Մովսիսյանի մահը սխալ արհեստական շնչառություն տալու արդյունքում վրա հասնելու, ինչպես նաև բժշկական միջամտության արդյունքում Հայկ Մովսիսյանի՝ կենդանի մնալու հավանականության վերաբերյալ հանգամանքները նախաքննության ընթացքում չպարզելու՝ բողոքաբերի պատճառաբանությունները նույնպես նախաքննությամբ հերքվել են: Պարզվել է, որ Հայկ Մովսիսյանը համաձայն չի եղել իր վերաբերյալ կայացված դատավճռի հետ, դժգոհություններ է հայտնել զինվորական կոմիսարից, դատավորից և դատախազից՝ իրեն անօրեն դատապարտելու համար, պատճառաբանել է, որ ինքն ազատված է զինվորական ծառայությունից և ունի զինվորական գրքույկ: Նրան խորհուրդ է տրվել դատավճռի դեմ ներկայացնել վերաքննիչ բողոք, որին համաձայնվել է:

2012թ. սեպտեմբերի 10-ից մինչև 2012թ. նոյեմբերի 27-ն ընկած ժամանակահատվածում Հայկ Մովսիսյանը գտնվելով կալանքի տակ՝ որևէ խախտում թույլ չի տվել, բուժօգնության չի դիմել, առողջության հետ կապված դժգոհություններ չի հայտնել, մեկուսարանում գտնվող կալանավորների հետ քիչ է շփվել, նրա նկատմամբ կոնկրետ հսկողություն չի սահմանվել:

Մեկուսարանի աշխատակիցների և կալանավորների կողմից նրա նկատմամբ ճնշում չի եղել, բռնություն չի գործադրվել: Հայկ Մովսիսյանն իրեն մեկուսացված է պահել:

2012թ. նոյեմբերի 27-ին, քնի ազդանշանից հետո, ժամը 21:30-ի սահմաններում՝ Հայկ Մովսիսյանը, իսկ ժամը 22:00-ին՝ մյուս կալանավորները պառկել են քնելու: Քննչական մեկուսարանի 1-ին և 2-րդ հարկերի հերթապահությունն իրականացնող Մ. Գրիգորյանը իր պարտականությունները կատարելիս շրջագայել է քննչական մեկուսարանի միջանցքով ութից մինչև տասնհինգերորդ խցերը, հինգից տաս րոպեն մեկ անգամ նայել է յուրաքանչյուր խցի դիտանցքից, սակայն արտառոց դեպք չի նկատել: Նույն գիշերը, ժամը 00:50-ից 01:00-ի սահմաններում Հայկ Մովսիսյանն ինքնասպանություն է գործել՝ ճաղավանդակից սավանով կախվելու եղանակով:

Բողոքում նշված պատճառաբանությունները հերքվել են նաև դեպքի վայրի, դիակի, իրեղեն ապացույցների, անձնական գործի զննության արձանագրություններով, կրկնակի դատաբժշկական փորձաքննության թիվ 1077/19/կ եզրակացությունով, ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի վարույթում քննված քրեական գործով ձեռք բերված և հետազոտված, ինչպես նաև վարույթն իրականացնող մարմնի կողմից ձեռք բերված այլ փաստաթղթերով և ապացույցներով:

Նախաքննության ընթացքում որևէ [illegible] տվյալ ձեռք չի բերվել որևէ անձի կողմից Հայկ Մովսիսյանի նկատմամբ [illegible] դաժան վերաբերմունք, գործադրելու կամ նրա անձնական [illegible] պարբերաբար նվաստացնելու միջոցով նրան ինքնասպանություն գործելու կամ դրան հորդորելու, խաբեության կամ այլ միջոցով Հայկ Մովսիսյանի մոտ ինքնասպանություն կատարելու վճռականության հակելու վերաբերյալ [illegible] պարզվել Հայկ Մովսիսյանի

վերաբերյալ քրեական գործով նախաքննության, դրա նկատմամբ դատավարական ղեկավարման և դատախազական հսկողության, մեղադրանքի պաշտպանության և դատաքննության ընթացքում վարույթն իրականացնող պաշտոնատար անձանց գործառույթների իրականացման կապակցությամբ նրանց կողմից պաշտոնեական անփութության, պետական ծառայության, արդարադատության դեմ ուղղված կամ որևէ այլ հանցագործության դեպք, ուստի պատճառաբանված որոշում է կայացվել քրեական գործի վարույթը կարճելու մասին՝ դեպքի բացակայության հիմքով:

Որոշման մեջ նշված, քրեական գործով ձեռք բերված փաստական հանգամանքների վերաբերյալ քննիչի գնահատականների հետ բողոքաբերների՝ համամիտ չլինելը կամ բողոքաբերների կարծիքը՝ վարույթն իրականացնող մարմնի կողմից պատշաճ քննություն չկատարելու, մի շարք հարցեր քննության առարկա չդարձնելու, ոչ օբյեկտիվ, անհիմն և չպատճառաբանված որոշում կայացնելու մասին, բավարար չէ՝ քննիչի վիճելի որոշումը վերացնելու և գործը նախաքննության ուղարկելու համար:

Հաշվի առնելով, որ բողոքարկվող որոշումը կայացվել է օրենքին համապատասխան, անձի իրավունքների կամ ազատությունների՝ խախտված լինելու վերաբերյալ բավարար հիմնավորումներ դատարանին չեն ներկայացվել՝ դատարանը գտնում է, որ բողոքն ամբողջությամբ անհիմն է և ենթակա է մերժման:

Վերոգրյալների հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 41-րդ, 42-րդ, 263-րդ հոդվածներով՝ դատարանը

ՈՐՈՇԵՑ

Բողոքաբերներ, Հեղինե Հարությունի Պետրոսյանի ներկայացուցիչներ Արթուր Ալբերտի Սաքունցի և Արայիկ Միքայելի Ջայլանի 2014թ.-ի հուլիսի 25-ի բողոքը, որով խնդրել են վերացնել թիվ 62202513 քրեական գործով Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայության հատկապես կարևոր գործերի քննիչ Մ. Բաբայանի 2013թ. դեկտեմբերի 10-ի՝ քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշումը և գործն ուղարկել նոր քննության, ամբողջությամբ մերժել՝ անհիմն լինելու պատճառով:

Որոշումը վերաքննության կարգով կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան՝ հրապարակվելու պահից տասնօրյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ Մ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ